ՊԱՏՄԱԲԱՆԱԿԱՆ

ՀԵՂԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

ՍԱՐԿԱՎԱԳՈՒՀԻՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՊԱՇՏՈՆԸ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Քրիստոնեական Եկեղեցում եւ, մասնավորապես, Հայ Առաքելական Եկեղեցում սարկավագուհիների[1] առկայությունը պատմական իրողություն է:

Այս առումով սարկավագուհիների վերաբերյալ կարեւորագույն հարցերից մեկը Եկեղեցում նրանց վերապահված պարտականություններն ու ծառայությունն են:

Վաղ շրջանի Եկեղեցում սարկավագուհիների պարտականությունների մասին Ներսես Մելիք-Թանգյանը գրում է. «Սարկաւագուհիները կային Պօղոս առաքեալի ժամանակից (Հռոմ. ԺԶ. 1), Պոլսոյ եկեղեցում Յուստինիանոսի եւ Հերակլի ժամանակ 40 հոգի կար: «Առաքել. կարգադրութիւնները» պատուիրում են, որ դրանք լինեն կոյսեր, կամ բարեպաշտ այրիներ եւ 40 տարեկան: Նիկիայի 19 կանոնով (Ա. գ., 118 երես) նրանք սպանում էին առանձին ձեռնադրութիւն: Նրանց պարտաւորութիւններն էին. 1) կանանց պատրաստել մկրտութեան համար, 2) մկրտութիւնը՝ եթէ մեծ կանայք էին մկրտւում, կատարում էին նրանք, իսկ դրոշմը՝ վարագոյրի ետեւից, անում էին եպիսկոպոսը կամ քահանան, 3) կնքամայր էին լինում հներում բոլոր աղջիկ մկրտուածներին, 4) կանանց վերաբերեալ բոլոր հոգացողութիւնները եպիսկոպոսի պատուէրով կատարում էին սրանք, 5) այն դռների մօտ էին կանգնում եկեղեցում, որտեղից կանայք էին մտնում եւ նրանց մէջ կարգապահութեան վրայ հսկում»[2]:

Նկատենք, սակայն, որ սարկավագուհիների պարտականությունների վերաբերյալ այս տեղեկությունները քաղված են Դ. դարով թվագրված «Առաքելական կարգադրություններ»[3] ժողովածուից, որը Հայ Եկեղեցին համարում է ոչ վավերական[4]: Այսուհանդերձ, ավելորդ չէ անդրադառնալ նրանում ներառված մի քանի կանոնների:

---

1 Սարկավագուհիների ձեռնադրության կանոնական ու պատմական առանձնահատկությունների վերաբերյալ արժեքավոր նյութ է պարունակում Աբել աբեղայի «Հայ Եկեղեցու սարկաւագուհիները» գիրքը: Հեղինակը, ներկայացնելով ասպվածաբան Մարիա-Քրիստին Արատի «Հայ Եկեղեցու սարկավագուհիները կանոնական տեսանկյունից դիտված» ուսումնասիրությունը, կատարել է նաեւ ուշագրավ մի շարք հավելումներ. տե՛ս **Աբէլ աբեղայ**, Հայ Եկեղեցու սարկաւագուհիները, Նիւ Եօրք, 1991:

2 **Ներսէս վրդ. Մելիք-Թանգեան,** Հայոց եկեղեցական իրաւունքը, Ս. Էջմիածին, 2011, էջ 670: Այս մասին նաեւ տե՛ս **Աբէլ աբեղայ,** նշվ. աշխ., էջ 12-15:

3 Այն 8 գլխից բաղկացած ժողովածու է, որի երեք գլուխներում (2-րդ գլխի 58-րդ կանոն, 3-րդի 7-րդ, 15-րդ եւ 16-րդ կանոններ, 8-րդի 28-րդ եւ 31-րդ կանոններ), կան սարկավագուհիներին վերաբերող կանոններ: Տե՛ս "Апостольские постановления", Казань, 1864/ http://krotov.info/acts/04/2/constit_apost.htm£)

4 Տե՛ս **Ներսէս վրդ. Մելիք-Թանգեան**, անդ, էջ 59-67. **Ն. Յակովբոս Վ. Տաշեան**, Վարդապետութիւն Առաքելոց անվաւերական կանոնաց մատեանը, Վիեննա, 1896, էջ 78-82:

Մասնավորապես, 3-րդ գլխի 15-րդ կանոնում սարկավագուհիների մասին ասվում է. «Նաեւ սարկավագուհի ընտրիր հավատավոր եւ սուրբ կանանցից, որպեսզի ծառայի կանանց, քանզի պատահում է երբեմն, որ անհավատների պատճառով որոշ տներ կանանց սպասավորելու համար չի կարելի այր սարկավագ ուղարկել. այդիսկ պատճառով անօրենների հանդարտեցնելու համար ուղարկիր այնտեղ սարկավագուհու:

Իրականում, շատ դեպքերում ենք օգտվում սարկավագուհու ծառայությունից: Հատկապես, երբ մկրտվում են կանայք, սարկավագը թող սուրբ յուղով օծի միայն նրանց ճակատները, որից հետո թող սարկավագուհին օծի նրանց. քանի որ անհրաժեշտություն չկա, որ տղամարդիկ տեսնեն կանանց: Եւ եպիսկոպոսը ձեռնադրության ժամանակ թող օծի միայն նրա [սարկավագուհու] գլուխը, ինչպես նախկինում օծվում էին քահանաներն ու թագավորները...»[5]:

Այսպիսով, ըստ այս կարգադրությունների, վաղ շրջանի Եկեղեցում սարկավագուհիներին վերապահված ծառայությունների շրջանակը սահմանափակվել է սոսկ կանանց հետ կապված որոշ գործառույթներով: Միաժամանակ սարկավագուհին զուրկ է հոգեւոր իշխանությունից, հետեւաբար նաեւ՝ համապատասխան գործառույթներից: Այս մասին «Առաքելական կարգադրություններ»-ի 8-րդ գլխի 28-րդ կանոնում ասվում է. «Սարկավագուհին չի օրհնում, բայց եւ ոչինչ չի կատարում այն ամենից, ինչ անում են քահանաները կամ սարկավագները. նա [սարկավագուհին] հսկում է դռները եւ ծառայում է քահանաներին կանանց ընկղմման ժամանակ՝ հանուն պատշաճության»[6]:

Սակայն, ինչպես արդեն նշել ենք, «Առաքելական կարգադրություններ»-ը Հայ Եկեղեցին համարում է ոչ վավերական: Ինչ վերաբերում է Հայ Եկեղեցու կանոններին, ապա դրանցում սարկավագուհիների, առավել եւս նրանց պարտականությունների մասին որեւէ հրահանգ չկա: Այս մասին իր գրքում իրավացիորեն նշում է նաեւ Աբել աբեղան՝ իբրեւ բացառություն բերելով «Կանոնագիրք Հայոց»-ում ընդգրկված Նիկիո ժողովի ԺԹ. կանոնը՝ ժողովածուի հեղինակ Վազգեն Հակոբյանի ծանոթագրությամբ:

Նշված կանոնում, մասնավորապես, ասվում է. «...Սոյնպէս եւ վասն սարկաւագացն եւ ամենայն ոք որ եւ իցեն ընդ կանոնաւք, նոյն կարգ կացցէ: Յիշեցաք եւ վասն սարկաւագաց կանանցն, որք կերպարանաւք ձեռնադրութիւն ունին, զի ամենայն իրաւք իբրեւ զմի յաշխարականաց կացցեն»[7]:

Այս կանոնում «սարկավագուհի» բառը գործածված չէ: Սակայն, ներկայացնելով կանոնի հունական բնագիրն ու այն համեմատելով հայերեն թարգմանության հետ, Վ. Հակոբյանը եզրակացնում է. «Ինչպես տեսնում եք, հունարենում խոսքը սարկավագուհիների մասին է, իսկ հայերենում մի դեպքում «սարկաւագացն», մյուսում՝ «սարկաւագաց կանանցն»: Երկու դեպքում էլ պետք է հասկանալ սարկավագուհիներ[8]»:

Արդյո՞ք Դ. դարում, երբ ընդունվել են Նիկիո կանոնները, Հայ Եկեղեցում եղել են

5 “Апостольские постановления”.

6 Անդ:

7 «Կանոնագիրք Հայոց», հտ. Ա., Երեւան, 1964, էջ 130. հմմտ. **Աբէլ աբեղայ**, նշվ. աշխ., էջ 15-16:

8 Անդ, էջ 565. հմմտ. **Աբէլ աբեղայ,** նշվ. աշխ., էջ 15-16:

սարկավագուհիներ, այս մասին որեւէ մատենագրական տեղեկություն գոյություն չունի: Սակայն, եթե հաշվի առնենք Վազգեն Հակոբյանի վերոնշյալ պնդումը, ապա ենթադրելի է, որ Հայ Եկեղեցում եւս եղել են սարկավագուհիներ, որոնք, ձեռնադրություն ունենալով հանդերձ, զուրկ են եղել հոգեւոր իշխանությունից, ինչի մասին խոսվում է նաեւ «Առաքելական կարգադրություններ»-ում: Հետեւաբար՝ Դ. դարում, Հայ Եկեղեցում սարկավագուհիների հնարավոր գոյության պարագայում, նրանց վերապահված գործառույթները պետք է, որ հիմնականում համապատասխանեին «Առաքելական կարգադրություններ»-ում նշված գործառույթներին:

Հայ Եկեղեցու սարկավագուհիների ծառայության ու պարտականությունների վերաբերյալ առաջին որոշակի տեղեկությունները հանդիպում են միայն ԺԲ.-ԺԳ. դարերի հեղինակների կանոնական եւ պատմագրական գործերում: Մասնավորապես, սարկավագուհիների մասին հիշատակումներ կան Մխիթար Գոշի (ԺԲ. դար) եւ Սմբատ Սպարապետի (ԺԳ. դար) դատաստանագրքերում, ինչպես նաեւ Ստեփանոս Օրբելյանի (ԺԳ. դար) «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատության մեջ: Ընդսմին՝ բոլոր այս հեղինակների գործերում սարկավագուհիները սարկավագների հետ մեկտեղ դասվում են եկեղեցական նվիրապետության միեւնույն՝ 6-րդ աստիճանին:

Հատկանշական է, որ այս շրջանի Մաշտոցներում կան նաեւ սարկավագուհիների ձեռնադրության կանոններ, որոնք հիմնականում կրկնում են սարկավագական ձեռնադրության կանոնները[9]: Այս առումով ուշագրավ է հնագույն մի Մաշտոցից քաղված «Ձեռնադրութիւն կրօնաւորութեան արժանացելոցն ի չափ հասակի կատարման տիոցն եւ նմանակցութեան ի Քրիստոս միացելոյն» կոչված կարգը, որ նկարագրել է Մխիթարյան միաբան Վարդան Հացունին՝ այն թվագրելով ԺԱ. դարով: Եկեղեցական այդ կարգը վերաբերում է ինչպես այր, այնպես եւ կին սարկավագների ձեռնադրությանը: Այս առիթով Հացունին ընդգծում է կանոնի մեջ արված հավելումը՝ «իսկ կանաց պարտ է սքեմ տալ, եւ զնոյն կատարել կարգս»[10]:

Ըստ Հացունու նկարագրության՝ ձեռնադրության ընթացքն առանձնանում է մեկ տարբերությամբ. «Եթէ այր է՝ կրօնաւորական գդակ կը դնեն. իսկ եթէ կին, «հոլանի սարկաւագուհիքն արասցեն, սեւ փակեղամբ ծածկեսցեն զճակատն մինչեւ յաւուն»[11]:

Այսուհանդերձ, հակառակ ձեռնադրության միօրինակության եւ նվիրապետության մեջ զբաղեցրած նույն կարգի, ԺԲ.-ԺԳ. դարերում եւս սարկավագների եւ սարկավագուհիների պարտականություններն առանձնանում են: Միաժամանակ, ի տարբերություն վաղ շրջանի Եկեղեցու, ԺԲ.-ԺԳ. դարերում սարկավագուհիներին նաեւ արտոնվում է քարոզել կանանց եւ նրանց համար Ավետարան ընթերցել:

Այսպես՝ Մխիթար Գոշի Դատաստանագրքի «Յաղագս դատաստանաց կարգաց եկեղեցւոյ եւ տան թագաւորի» գլխում սարկավագուհիների պարտականությունների

9 Տե՛ս **Վ. Հացունի,** Դուսաստանք Հայաստանի մէջ. «Բազմավէպ»,1923, փետրուար, էջ 46-47, մարտ, էջ 73. **Արէլ արեղայ,** նշվ. աշխ., էջ 32-34:

10 Տե՛ս **Վ. Հացունի,** անդ, էջ 47:

11 Անդ:

մասին կարդում ենք. «Են եւ ի կանանց սարկաւագունք ձեռնադրեալք, որք կոչին սարկաւագուհիք, վասն քարոզելոյ կանանց եւ ընթեռնուլ Աւետարան, զի մի՛ մտցէ անդ այր, եւ մի՛ նա արտաքս, քան զվանսն ելանիցէ: Բայց յորժամ մկրտութիւն առնեն քահանայքն, զան յաւազանն, զի զկանայսն նոքա լուանան ջրով քաւութեանն՝ ներքոյ վարագուրին: Սքեմ է նոցա ամենայն ինչ հաւատաւորաց, բայց ի ճակատն խաչ լինի, եւ քուշկէն ի յաջմէ կողմանէ ի կախ ունելով: Մի՛ ինչ նոր եւ անկարգ վարկցիս զայս, քանզի ի սրբոց Առաքելոցն աւանդութենէ ուսանիմք, քանզի ասէ՝ յանձն առնեմ ձեզ զՓիբէ քոյր մեր, որ է սպասաւոր եկեղեցւոյն»[12]:

Այսպիսով, ըստ Գռշի Դատաստանագրքի, այնտեղ, ուր տղամարդկանց մուտքն արգելված էր, կանանց քարոզելու եւ Ավետարան կարդալու իրավունքը վերապահվել է սարկավագուհիներին: Ենթադրելի է, որ այստեղ խոսքը կարող էր վերաբերել կուսանոցներում ձեռնադրված սարկավագուհիներին. նրանք իրենց այս գործառույթները կարող էին կատարել վանքի ներսում միայն, ուր այր չէր մտնում, իսկ կույսերը վանքից դուրս չէին գալիս:

Միաժամանակ, նույն կանոնի համաձայն՝ սարկավագուհին, ինչպես վաղ շրջանի Եկեղեցում, շարունակում է օգնել քահանային կանանց մկրտության ժամանակ[13]:

Դատաստանագրքի «Յաղագս դատաստանաց աքսորելոց» գլխում սահմանված է նաեւ սարկավագուհուն եկեղեցական աստիճանից զրկելու կանոնը. «Արդ, եթէ արժանաւոր ոք աքսորանաց իցէ, որք միանգամ յեկեղեցական կարգէ իցեն, ըստ իրաւանց այսպէս լիցի. սարկաւագք եւ քահանայք լուծցին յեպիսկոպոսէ, զի նա է ձեռնադրող նոցա. սարկաւագուհիք՝ ի սարկաւագաց. եւ աշխարհականք, եւ հաւատաւորք, եւ կրաւնաւորք եւ որք միանգամ ի քահանայէ ձեռնադրին՝ ի քահանայէն»[14]:

Շուրջ մեկ դար անց Կիլիկիայում Սմբատ Սպարապետի կազմած «Դատաստանագրքում» եւս սարկավագուհիներին նույն հրահանգներն են տրված:

«Եւ Զ. դասք են սարկաւագունք... Եւ կարեն Աւետարան կարդալ ու քարոզ ասել եւ

12 **Մխիթար Գոշ**, Գիրք Դատաստանի, աշխատ. Խոսրով Թորոսյանի, Երեւան, 1975, էջ 136-137: Դատաստանագրքի մեկ այլ՝ Գ. խմբագրությունում այս կանոնը, առանց բովանդակային փոփոխության, փոքր-ինչ այլ կերպ է ձեւակերպված. տե՛ս անդ, էջ 400:

13 Հարկ է նշել, որ «Կանոնագիրք Հայոց»-ում ընդգրկված մի քանի կանոնախմբերում (Կանոնք սրբոյն Սահակայ Հայոց Հայրապետի, Կանոնք Ներսէսի Կաթողիկոսի եւ Ներշապհոյ Մամիկոնէից եպիսկոպոսի, Բարսղի գիր կանոնական վասն պէսպէս եւ բիւրապատիկ ախտից) կան հոդվածներ, որոնք կանանց խստիվ արգելում են մկրտության ժամանակ կանգնել քահանայի մոտ սպասավորություն անելու կամ սարկավագի պաշտոն կատարելու: Մասնավորապես, Սահակ Պարթեւի կանոնախմբում այս մասին ասվում է. «Մկրտութիւն առնել երկիւղածութեամբ, եւ կանայքն ի ժամ մկրտութեանն մերձ առ քահանայսն մի՛ իշխեսցեն կալ, որպէս սովորեցին ոմանք առնել յանդգնաբար եւ մկրտել ընդ նոսա, այլ ի տեղւոջ իւրեանց աղաւթեսցեն» («Կանոնագիրք Հայոց», հ. Ա., էջ 377-378. հմմտ. **Արէլ արեղայ,** նշվ. աշխ., էջ 22): Ներսեսի եւ Ներշապուհի կանոնախմբում համապատասխան հոդվածը հրահանգում է. «Եւ կանայք առ քահանայս մի՛ իշխեսցեն կալ, բայց սարկաւագունքն սպասաւորեսցեն, եւ կանայք յիւրեանց տեղին աղաւթեսցեն, եւ մի՛ եղիցին գործակիցք քահանայիցն, որպէս լսեմք, անելով զտեղիս սարկաւագացն» («Կանոնագիրք Հայոց», հ. Ա., էջ 488): Այս նույն կանոնը Արել արեղան վերագրում է Դվինի ժողովին (**Արէլ արեղայ**, նշվ. աշխ., էջ 22): Ժ. դարի խմբագրության կանոնագրքում ներառված Բարսեղ Կեսարացու կանոնախմբում եւս նույն հրահանգն է. «Քահանայ ի ժամ մկրտութեանն մի՛ իշխեսցէ զկին մարդ ի սուրբ աւազանն թողուլ, եւ մի՛ կնքաւոր կացուցանել զայսահարս եւ զապաշխարողս» («Կանոնագիրք Հայոց», հ. Բ., Երեւան, 1971, էջ 128):

14 **Մխիթար Գոշ**, Գիրք Դատաստանի, Երեւան, 1975, էջ 141:

զսկիին բերել ի սենէկէն ի սեղանն, եւ քշոց քշել, ու խունկ ծխել, եւ հաղորդութեան սկիին բերել, եւ թէ հրամայէ քահանայն, նա սարկաւագուհիք կարեն ձեռնադրել, որ եւ նոքա եւս կարեն քարոզ ասել կանանց եւ Աւետարան կարդալ ուր եւ այր մարդ չմտնէ:

Եւ սքեմ է նոցա հաւատաւորացն, եւ կարեն լուանալ զոդայք եւ կանայք քաւութեան ջրով, եւ խաչ ունենան ի ճակատն եւ քուշ կենայ ի յաջ թեւն. եւ ի Հայոց կանանց վաղ է ջնջած այս կարգս: Բայց այս այն է, զոր գրել է առաքեալն, թէ յանձն առնեմ ձեզ զՓիբէ քոյր մեր, որ ի սպասաւոր եկեղեցոյն»[15],- ասվում է Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքում»:

ԺԳ. դարի Սյունյաց աշխարհի պատմագիր Ստեփաննոս արք. Օրբելյանն իր «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատության «Վասն ինն դասուց եկեղեցւոյ թէ ո՛րք են եւ ո՛րպէս Վարին» գլխում (գլուխ ԻԷ.) սարկավագուհիներին կրկին դասելով եկեղեցական 6-րդ աստիճանին, նշում է նրանց պարտականությունները. «Իսկ ի կանանց սարկաւագուհիք լինին զի ի կանանց վանս քարոզեն. զգեստ է նոցա հաւատաւորացն, փիլիոն արկանել եւ ճակատն խաչ ունել եւ փոքրիկ ուրարն յաջմէ ի ներքոյ բազկին զհանդերձէն կամ զգօտւոյն ի կախ ունելով ելանէ ի բեմն եւ քարոզէ եւ ընթեռնու Աւետարան ոչ յամբոխին ի վերայ բեմին. այլ առանձինն կամ յանկեան ուրեք. բայց ի սուրբ խորհրդոյն սպասաւորութիւն բնաւ մի՛ հպեսցի որպէս արու սարկաւագունքն»[16]:

Այսպիսով, ըստ մատենագրական վկայությունների, կարելի է որոշակի պատկերացում կազմել ԺԸ.-ԺԳ. դարերում Հայ Եկեղեցու սարկավագուհիների պարտականությունների վերաբերյալ. նրանք օգնում են քահանային կանանց մկրտության ժամանակ, կարող են նաև կանանց համար Ավետարան ընթերցել ու քարոզել, այս ամենի հետ զուրկ են հոգեւոր իշխանությունից, որի մասին Օրբելյանը, ինչպես նշված է վերը, ասում է. «Բայց ի սուրբ խորհրդոյն սպասաւորութիւն բնաւ մի՛ հպեսցի որպէս արու սարկաւագունքն»:

Պատմական երկարատեւ դադարից հետո Հայ Եկեղեցու սարկավագուհիների մասին վկայություններ կրկին հանդիպում են արդեն ԺԷ.-ԺԹ., ընդհուպ մինչեւ Ի. դարը հասնող զանազան արձանագրություններում ու վավերագրերում: Ընդսմին՝ Հայ Եկեղեցում կուսանաց անապատների վերաշխուժացման այս շրջանում սարկավագուհիների եկեղեցական ծառայության ու պարտականությունների շրջանակը փոխվում ենք առավել ընդարձակ:

Այս դարերից հայտնի են նախ՝ Սյունիքում, ապա եւ՝ Նոր Ջուղայում, Թիֆլիսում եւ Շուշիում հիմնված կուսանաց անապատները, որտեղ փորձառու միանձնուհիները ձեռնադրվել են սարկավագուհի: Հայտնի են նաեւ Գ. Պոլսի Գալֆայան որբանոցի սարկավագուհիները:

ԺԷ.-ԺԹ. դարերի սարկավագուհիների մասին առաջին գրավոր հիշատակությունները

15 «Դատաստանագիրք Սմբատ Իշխանի» (Գունդստաբլի), ձեռագրերի համեմատությամբ լույս ընծայեց Արսէն վարդապետ Ղլտճեան, Ս. Էջմիածին, 1918, էջ 40. հմմտ. **Արէլ արեղայ**, նշվ. աշխ., էջ 24:

16 «Պատմութիւն նահանգին Սիսական. Արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910, էջ 110-111:

ներից մեկը, թերեւս, Սյունյաց աշխարհի Շենհերի նշանավոր կուսանաց անապատում 1654 թ. ընդօրինակված «Շարակնոց»-ի հիշատակարանն է, որտեղ արձանագրված է միանձնուհի սարկավագուհու ապրիճանը[17]: Սյունիքի կուսանոցներում բնակված սարկավագուհիների մասին հայտնի է միայն, որ նրանցից շատերը շնորհալի գրչուհիներ են եղել եւ իրենց արվեստը փոխանցել են իրենց հաջորդներին: Նրանց եկեղեցական ծառայության մասին մեզ հայտնի տեղեկություններ չկան:

Ինչ վերաբերում է վերը նշված մյուս կուսանոցներին, ապա այս վանքերի սարկավագուհիների ծառայության մասին բավականաչափ տեղեկություններ են հաղորդում մեզ հասած արխիվային նյութերը, կուսանոցների մասին պատմագրական հիշատակումները, մամուլի հրապարակումները:

Ինչպես նշեցինք, այս շրջանի սարկավագուհիների իրավունքների շրջանակը առավել ընդարձակ է: Ընդհանուր առմամբ՝ այն պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ վանքի սահմաններից դուրս եւ վանքի ներսում:

Վանքի սահմաններից դուրս սարկավագուհիների ծառայությունն ըստ էության հովվական է. նրանք մասնակցում են բարձրաշխարհիկ կանանց հուղարկավորություններին, Ջրօրհնյաց տոներին եւ Ջատկի ճրագալույցին այցելում են իշխանական տներ՝ շարականների ու սաղմոսների երգեցողությամբ ավետում եկեղեցական տոների գալուստը:

Այս առումով ուշագրավ է ՀՀ Ազգային արխիվում պահվող Եղիսաբեթ եւ Կատարինե Սարբաշյանց սարկավագուհի քույրերի՝ Ասպրահանից 1853 թվականին գրված խնդրագիրը Ս. Էջմիածնի սինոդին եւ Էջմիածնի պատասխան նամակը՝ սարկավագուհի կույսերին իրենց եկեղեցական ապրիճանին համապատասխան արտոնություններ տալու վերաբերյալ:

1842-ին սարկավագուհի ձեռնադրված քույրերը խնդրում են, որպեսզի Թ-իֆլիսի սարկավագուհիների օրինակով իրենց եւս թույլատրվի մասնակցել հուղարկավորությունների, ինչպես նաեւ եկեղեցական տոներին այցելել երեւելիների տներ:

«Մեծաւ պատկառանօք վստահութիւն կալաք թախանձել սովաւ ի Լուսաւորչական Սինհոդոսէդ զի բարեհաճեսցի խնամ տանել մեզ եւ շնորհել զբացարձակ կանոն կատարելոյ զպաշտամունս՝ պատշաճաւորս ապրիճանի եւ կոչման մերոյ եւ միանգամայն հրամայել թէ կարե՞մք արդէօք ի տօնի Ջատկի եւ Ջրօրհնեաց ի տունս երեւելեաց ազգի մերոյ՝ յորս շրջիմք ըստ սովորութեան՝ ընթեռնուլ զԱւետարան, եւ երգել զերգս եւ զշարական՝ զոր երգեն ըստ պատշաճի առուր քահանայք կամ յեկեղեցիս քաղաքիս ընթեռնուլ զԱւետարան ի ժամ պատարագի անարգել՝ նոյնպէս հնա՞ր իցէ մեզ սաղմոս կարդալ երբեմն ի վերայ պատուաւոր կանանց եւ օրհորդաց ննջեցելոց»[18], - գրում են սարկավագուհի կույսերը:

17 Հիշատակարանում Աստվածատուր գրիչը նշում է, որ ձեռագիրն ընդօրինակել է «ի խնդրոյ սրբասնուն դստերն իմոյ՝ Հերիքնազ հաւատաւոր սարկաւագուհոյն...» (տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ. դարի հիշատակարաններ (1641-1660)», հ. 3, Երեւան, 1984, էջ 608. նաեւ «Հայկական ձեռագրերի հիշատակարանները կանանց մենաստանների եւ կուսակրոն կանանց վերաբերյալ». «Էջմիածին», 2013, Բ., էջ 91):

18 ՀՀ Ազգային արխիվ, ֆ. 56, ց. 1, գ. 3045:

Ազգային արխիվում պահվում է նաեւ Էջմիածնի Սինոդի պատասխան գրությունը[19], որով խնդրատու սարկավագուհիներին թույլատրվում է կատարել ծիսական բնույթի վերոհիշյալ արարողությունները:

Նկատենք, որ ծիսական նման արարողություններին սարկավագուհիների մասնակցությունը, ըստ էության, կուսանաց վանքերի, ինչպես նաեւ վանքերից դուրս բնակվող սարկավագուհիների համար (ինչպես Ասպրահանի կույսերի դեպքում) ապրուստի որոշակի միջոցներ ապահովելու լրացուցիչ աղբյուր էր:

Այս մասին խոսվում է ինչպես Սինոդի պատասխան գրության մեջ, նույնպես եւ Թիֆլիսի Ս. Ստեփանոս կուսանոցին եւ Շուշիի Կուսանաց անապատին վերաբերող մի շարք վավերագրերում:

Մասնավորապես, 1850-ականներին Թիֆլիսի Ս. Ստեփանոս վանքի մայրապետ Գայանե սարկավագուհին Նոր Ջուղայի Ս. Կատարինե կուսանոցի մայրապետ Եղիսաբեթ Մարտիրոսյանցին ուղղած նամակում, տեղեկություններ հաղորդելով կուսանոցի ներքին կյանքի վերաբերյալ, նշում է վանքի եկամուտի աղբյուրները, որոնց թվում՝ «դ. ի կամաւոր նուիրանաց, զորս շնորհեն հրաւիրօղքն զկուսանս յայցելութիւն սգաւորաց» եւ «զ. ի տրոց իշխանաւորաց յորոց տունս երթան կուսանք ի գիշերի Ճրագալուցի ծննդեան Տեառն յերգել զաւետիս»[20]:

Ընդսմին՝ Գայանե մայրապետն իր նամակում միաբանության գլխավոր պարտականություններից է համարում կույսերի մասնակցությունը հուղարկավորության արարողություններին[21]: Այս մասին մայրապետը գրում է. «Եօթներորդ՝ այցելութիւն եւ միխթարութիւն սգաւոր կանանց քաղաքիս մի է ի գլխաւոր պարտաւորութեանց միաբանութեանս, քանզի ի տան ուրուք երբ մեռանի ոք, եթէ կամին ազգականք մեռելոյն ազդ առնեն զայսմանէ Մայրապետի վանացս, եւ յայնժամ՝ նա նշանակէ զերկուս կամ զերիս ի կուսանաց երթալ յայցելութիւն այնր զերդասպանի, նշանակեալ կուսանքն յերեկոյին՝ յորում լուսանայ օր թաղման հանգուցելոյն, երթան ի տուն նորին, նստին առ վայր մի առ սգաւորս եւ սփոփեն զնոսա հոգեկան խրատու, եւ ապա կատարեն ի վերայ հանգուցելոյն զկարգ հանգստեան եւ քաղեալ զամբիծն դառնան ի վանս, ի միւսումն առաւօտու կրկին երթան ի տուն հանգուցելոյն եւ ըստ առաջնումն սկսանին միխթարական բանիւք սփոփել զսգաւորսն. իսկ յորժամ դասք հոգեւորականաց տանեն զննջեցեալն յեկեղեցի,

19 Տե՛ս անդ:

20 «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան». աշխատ. Տեառն Սարգսի Սանահնեցւոյ Ջալալեանց թեմական արքեպիսկոպոսի Հայոց Վրաստանի, Իմէրէթի եւ այոց, մասն Բ., Տփխիս, 1853, էջ 68. «Թիֆլիսի Ս. Ստեփանոս կուսանաց անապատի պատմութիւնը», կազմեց Խորէն քահ. Խուցեան, Թիֆլիս, 1914, էջ 94-95:

21 1895 թ. Կ. Պոլսի «Հայրենիք» օրաթերթում Մելիք Պէյլիքճեան սրոբագրությամբ հեղինակը, որը ներկա է գտնվել Թիֆլիսի Ս. Ստեփանոս կուսանոցի մատրան մեջ տեղի ունեցած հոգեհանգստյան մի արարողության, նկարագրել է այն, «զոր կոյսերը կը կատարէին գլուխնին եւ դէմքերնին ալ մեծ մասամբ ծածկած սեւ ծածկոցներով, որոնց վրայէն մինչեւ ոտքերը ձգուած են նուրբ ասեղնագործ սպիտակ թիւլեր, իւրաքանչիւրը հագած է մէյմէկ գոյնի դպրական շապիկ ոսկեհուռ գօտիով սեղմուած, ոմանք մոմ ի ձեռին, երկուքն ալ կը բուրվառեն: Ինչպէս միշտ, այդ եզական արարողութեան մէջ ալ միակ այր մարդն էր պատարագիչ քահանան, զի կոյսերը մինչեւ առագ սարկաւագի աստիճան ունին, եւ, միայն չեն կարող պատարագել: Երբ հրաւիրուին՝ կնքթան մասնակցիլ նաեւ ննջեցեալներում յուղարկաւորութեան իբրեւ դպիր եւ սարկաւագ»: Հոդվածը վերահրատարակված է Կ. Պոլսի «Հայ խօսնակ» թերթում, Թ. տարի, 5-6, մայիս-յունիս, 1933:

յայնժամ եւ կուսանք առաջնորդեն սգաւոր կանանց յեկեղեցի: Յետ աւարտելոյ Պատարագին եւ կարգի հանգստեան եւ յուղարկաւորելոյ զհանգուցեալն առաջնորդութեամբ կուսանաց եւ սգաւորքն դառնան ի տուն, նոյնպէս առաջնորդութեամբ կուսանաց գնան սգաւորքն յերկրորդում աւուր թաղման հանգուցելոյն յեկեղեցին եւ դառնան ի տուն»[22]:

Հոգեհանգստյան արարողություններին մասնակցելն ու իշխանավորների տիրերն այցելելը իբրեւ կուսանոցի եկամուտի աղբյուր են նշել նաեւ Շուշիի կուսանաց անապատի կոյսերը կոնսիստորիային ուղղած տարբեր տարիների իրենց նամակներում: Այսպես, 1857 թ. Գայանե, Մագաղատ, Բալասան եւ Մարգարիտ սարկավագուհիները հայտնում են կուսանոցի եկամուտների մասին՝ նշելով դրանց աղբյուրները, որոնց թվում՝ «ի շրջելոց ի տունս ժողովրդոց ի ծննդեան իրիկուն, ...ի տէրաց ննջեցելոց հրաւիրողաց զմեզ»[23]:

Ավելի ուշ՝ 1862 թվականին գրված մեկ այլ նամակում[24] նույնը կրկին նշում է Գայանե սարկավագուհին:

Առավել ուշագրավ է, սակայն, սարկավագուհիների եկեղեցական ծառայությունը կուսանոցի սահմաններում, որտեղ, առնվազն ԺԹ. դարից սկսած, նրանց արտոնվել է նաեւ Ս. Պատարագի ժամանակ կատարել այդ սարկավագների համար սահմանված պաշտոններ[25]:

Այս արտոնությունն ունեին, մասնավորապես, Թիֆլիսի Ս. Ստեփանոս կուսանոցի սարկավագուհիները: Վանքի պատմությունը մեզ ավանդած խորեն քին. Խուցյանը նշում է, որ մինչեւ 1801 թվականը վանքի եկեղեցում Պատարագ չի մատուցվել: Եւ միայն այդ թվականից է, որ Հովսեփ արք. Արղությանի կարգադրությամբ ընտրվել է պատարագիչ քահանա[26]: Եկեղեցում մատուցվող պատարագների ժամանակ թե ինչ պաշտոն է Արղությանը սահմանել սարկավագուհիներին՝ հայտնի չէ: Փոխարենը՝ Ս. Ստեփանոսի մայրապետ Գայանե սարկավագուհու՝ վերը հիշատակված նամակում տեղեկություններ կան Ս. Պատարագի արարողությանը սարկավագուհիների մասնակցության մասին:

«...Ի պաշտել զկարգ պաշտաման եկեղեցւոյ եւ ի մատուցանել զսրբազան խորհուրդ Պատարագի երկիցս յեօթնեկի եւ հաւուր հանդիսաւոր տօնից նշանակի ի թեմական առաջնորդէ վիճակիս ոմն ի բարերարոյ քահանայից ըստ մերում ցանկութեան, իսկ զպաշտօն սարկաւագի եւ դպրի կատարեմք ինքնին»[27], - թվարկելով կոյսերի պարտականությունները՝ գրել է սբ. Ստեփանոսի մայրապետը:

---

22 «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան», էջ 67-68. «Թիֆլիսի Ս. Ստեփանոս կուսանաց անապատի պատմութիւնը», էջ 93-94:

23 ՀՀ Ազգային արխիվ, ֆ. 56, ց. 1, գ. 3453:

24 Տե՛ս անդ:

25 Նման ավանդույթ եղել է Ասորական եկեղեցում (տե՛ս **Արել արեղայ**, նշվ. աշխ., էջ 17): Այս առիթով Աբել աբեղան ուշադրություն է հրավիրում կանանց խորան բարձրանալու ասորական ավանդության դեմ Հայ Եկեղեցու ԺԱ. դարի վարդապետներից Պողոս Տարոնեցու դիրքորոշման վրա. «Նաեւ կանանց հրամայեն ելանել ի սուրբ խորանն Աստուծոյ, որ օտար է յԱռաքելական եւ ի մարգարէական կանոնացն, զոր եւ ասեաց իսկ զայս Հոգին Սուրբ, զսուրբ խորանն կոխան առնել կանանց» (տե՛ս **Արել արեղայ**, նշվ. աշխ., էջ 25-26:) Նշենք նաեւ, որ «Կանոնագիրք Հայոց»-ում ընդգրկված Լավոդիկեի կանոնախմբում է միայն հանդիպում նման արգելք. «Չէ արժան զլոկ կանայս ի բեմ հանել, բայց զնորակնիք յաւուր պատնի մերձ առ բեմն կացուցանել» («Կանոնագիրք հայոց», հ. Ա., աշխատ. Վազգեն Հակոբյանի, Երեւան, 1964, էջ 238:)

26 Տե՛ս «Թիֆլիսի Ս. Ստեփանոս կուսանաց անապատի պատմութիւնը», էջ 63:

27 «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան», էջ 65. «Թիֆլիսի Ս. Ստեփանոս կուսանաց անապատի պատմութիւնը», էջ 90:

Ս. Պատարագի ընթացքում սարկավագի պաշտոն են կատարել նաեւ Նոր Ջուղայի Ս. Կատարինե կուսանոցի, Շուշիի կուսանաց անապատի, ավելի ուշ՝ նաեւ Կ. Պոլսի Գալֆայան որբանոցի սարկավագուհիները:

Այսպես, Նոր Ջուղայի Ս. Կատարինե կուսանոցում եկեղեցական արարողություններին սարկավագուհիների մասնակցության մասին Նոր Ջուղայի պատմության ԺԹ. դարի հեղինակ Հովհաննես Տեր-Հովհաննիսյանցը գրում է, թե Նոր Ջուղայի թեմական առաջնորդ Թադեոս արք. Բեկնազարյանը 1851 թ. ավագ սարկավագության աստիճան է շնորհել կուսանոցի միանձնուհիներին՝ արտոնելով նաեւ նրանց մասնակցությունը Պատարագի արարողություններին[28]:

Այս մասին Հովհաննիսյանցը գրում է. «Յառաջ քան զժամանակ առաջնորդութեանն ներկայ Թադէոս Սրբազան արքեպիսկոպոսի, ընդունէին նորընծայքն ի կուսակրօնութիւն զչորեսին եկեղեցական ստորին աստիճանս, եւ խարանազգեստ լեալ՝ համարեալ լինէին ի թիւ կրօնաւոր կուսանաց. իսկ յամի 1851 ի 29 Սեպտեմբերի արդի Առաջնորդ Սրբազան Թադէոս եպիսկոպոսն շնորհեաց նոցա զաստիճան աւագ սարկաւագութեան, պատուէր տալով որպէս սարկաւագ սպասաւորել ի ժամ Պատարագի՝ զգենլով զշապիկ դպրաց, եւ կրելով ի գլուխ զքօղ սպիտակ»[29]:

Ավելի ուշ նույն երեւույթը տեսնում ենք նաեւ Պոլսի Գալֆայան որբանոցում: 1918 թ. Պոլսի պատրիարքական փոխանորդ Գաբրիել արք. Ճեւահիրճյանը օծում է որբանոցի տարածքում դեռեւս 1889 թ. կառուցված աղոթարանը եւ մատուցում առաջին Պատարագը: Նկատենք, որ մատրան օծումը մխիթարություն էր հայերի համար, քանի որ Հայոց ցեղասպանության տարիներին գրավված ու ավերված էր Խասգյուղի Ս. Ստեփանոս եկեղեցին, եւ որբանոցի Ս. Աստվածածին մատուռ կարող էին այցելել նաեւ իրենց եկեղեցուց զրկված ծիսականները: Նույն օրը սրբազան հայրը դպրության չորս աստիճաններ է շնորհում որբանոցի մայրապետին եւ երեք քույրերի՝ տալով նրանց ուրար կրելու արտոնություն[30]:

1933 թ. արդեն Կ. Պոլսի Հայոց պատրիարք Մեսրոպ արք. Նարոյանը, եւս երկու քույրերի շնորհելով դպրության չորս աստիճաններ, արտոնում է նրանց Ս. Պատարագի ժամանակ խնկարկել եւ Ավետարան կարդալ: Իսկ որբանոցի մայրապետին՝ մայր Աղավնուն, տալով ավագ սարկավագության կոչում, իրավունք է շնորհում եկեղեցում կա-

28 Այստեղ որոշ սխալմունք կա: Նոր Ջուղայի կուսանոցում սարկավագուհիների գոյության մասին վկայություններ կան դեռեւս ԺԷ. դարից: 1660 թ. Հակոբ քահանայի ընդօրինակած «Խորհրդատետր»-ի հիշատակարանում նշված են Ս. Կատարինեի մեկ տասնյակից ավելի սարկավագուհիների անուններ («Հայերեն ձեռագրերի ԺԷ. դարի հիշատակարաններ (1641-1660)», հ. 3, էջ 960-961): Մինչդեռ թե Տեր-Հովհաննիսյանցը եւ թե Խորեն քահանա Խուցյանը թեմական առաջնորդ Թադեոս արք. Բեկնազարյանին են վերագրում վանքում սարկավագուհիներ ձեռնադրելու նախաձեռնությունը: Խուցյանն այս մասին գրում է. «Նոր Ջուղայի եւ Սպահանի առաջնորդ Թադէոս արքեպիսկոպոսը Թիֆլիսի կուսանոցի ձեռով այստեղ էլ արժանատր կոյսերին տալիս է սարկաւագութեան աստիճան» («Թիֆլիսի Ս. Ստեփանոս կուսանաց անապատի պատմութիւնը», էջ 95): Ենթադրելի է, որ սարկավագուհիների ձեռնադրությունը ինչ-որ ժամանակ կուսանոցում ընդհատվել է, որը վերականգնել է առաջնորդ Թադեոս արք. Բեկնազարյանը:

29 «Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան», **Յ. Տեր-Յովհաննէսեանց**, հ. 2, Նոր Ջուղա, 1881, էջ 226-227:

30 Տես **Յակոբ Չիլար, Պերճ Էրզիեան,** Հարիւրամեայ յիշատակարան Գալֆաեան տան. 1866-1966, Իսթանպուլ, 1966, էջ 80:

տարել սարկավագների համար սահմանված բոլոր պաշտամունքները: Որբանոցի 68-ամյա պատմությանը նվիրված գրքույկում այս մասին ասվում է. «24 Նոյ. 1933-ին Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր ձեռնադրութեամբ երկու քոյրերը ստացան դպրութեան չորս աստիճանները եւ ուրարակրութիւն, այս աստիճաններով անոնք իրաւունք կ՚ստանային խնկարկելու եւ Աւետարան կարդալու Պատարագի միջոցին. իսկ Մայր Աղաւնի, ստացաւ իրաւունք՝ եկեղեցւոյ մէջ բոլոր պաշտամունքները կատարելու, սահմանուած սարկաւագներու համար: Մայր Աղաւնի Պատարագի միջոցին վերաբերում կը կատարէ իսկ երկու քոյրերը ուրարակիր կը խնկարկեն սեղանին, որուն սպասաւորելու կոչուեցան»[31]:

Աղավնի մայրապետի մահվանից հետո՝ 1955 թ., Կ. Պոլսի հաջորդ պատրիարք Գարեգին արք. Խաչատուրյանը ավագ սարկավագության աստիճան է շնորհում որբանոցի հաջորդ մայրապետ նշանակված քույր Մարիամ Քեռսեյանին:

Հետաքրքիր է ձեռնադրության նկարագրությունը: «Ս. Պատարագէն առաջ, Ս. Հայրը կիսասարկաւագի աստիճան տուաւ Քոյր Մարիամի, որ մանիշակագոյն շապիկ հագած էր, քովը ունենալով իր գործակիցներէն Քոյր Զարմուհիի ու Քոյր Արուսեակը:

Սրբազանը անոր յանձնեց ուրարը, երգ ու շարականի մէջտեղ: Ողջոյնէն առաջ աւագ-սարկաւագութեան աստիճան տրուեցաւ Քոյր Մարիամի «Ուրախ լեր» շարականով: Քոյրը ծնրադիր Աւագ Սեղան առաջնորդուեցաւ, քովն ունենալով երկու քոյրերը ու խարտաիլակութեամբ Տ. Արամ Հօր:

Քոյր Մարիամ երեսը ժողովուրդին դառձուց ու ձեռամբարձ կեցաւ, որպէս նշան աշխարհօրէն գործերէ հրաժարելուն: Դպիրները երեք անգամ «Արժանի է» երգեցին»[32]:

Մարիամ սարկավագուհուն, ինչպես իր նախորդներին, եւս արտոնվում է Ս. Պատարագի ժամանակ սպասավորել սուրբ սեղանը: Այս արտոնությունն ուներ նաեւ Գալֆայան միաբանության վերջին սարկավագուհին՝ Հռիփսիմե Սասունյանը՝ վախճանված 2007 թվականին: 1982-ին նրան սարկավագության աստիճան է շնորհել Շնորհք պատրիարք Գալուստյանը: Սա վերջին սարկավագուհու ձեռնադրությունն է, որ եղել է Պոլսում եւ ընդհանրապես Հայ Առաքելական Եկեղեցում[33]:

Ի հավելումն այս ամենի, նշենք, որ հայտնի են առանձին դեպքեր, երբ Հայ Եկեղեցում սարկավագուհիները մասնակցել են Ս. Պատարագի արարողությունների նաեւ կուսանոցների սահմաններից դուրս: Որքան էլ պարագայական լինեն դրանք, այսուհանդերձ, նման դեպքերն առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում:

---

31 Գալֆեան աղջկանց որբանոց (1866-1934), Կ. Պոլիս, 1935, էջ 66. **Յակոբ Չինար, Պերճ Էրզիեան,** Հարիւրամեայ յիշատակարան Գալֆեան տան. 1866-1966, էջ 49:

32 **Յակոբ Չինար, Պերճ Էրզիեան,** Հարիւրամեայ յիշատակարան Գալֆեան տան. 1866-1966, էջ 56:

33 Ներկայում Կ. Պոլսի պատրիարքությունում կուսակրոնություն ուխտ արած քույր Գայանեին եւս արտոնված է Պոլսի եկեղեցիներում Պատարագի ժամանակ խորան բարձրանալ: Դեռեւս առանց որեւէ ձեռնադրության նրան քշոց անելու եւ մոմ բռնելու իրավունք է շնորհված: Այս առումով մեկ այլ հետաքրքիր իրողություն է Ամերիկայի Հայոց թեմերում, որտեղ խորան են բարձրանում շապիկ հագած մանկահասակ աղջիկներ: ԱՄՆ Հայոց Արեւելյան թեմի ներկայիս առաջնորդ Խաժակ արք. Պարսամյանը հաստատում է, որ մինչեւ 13 տարեկան այդ աղջնակներին մոմակալության կամ Ճաշի ընթերցված կարդալու արտոնություն է տրված եւ հատկապես այն ծուխերում, որտեղ չկան ձեռնադրված դպիրներ ու սարկավագներ: Ինչպես վկայում է Խաժակ սրբազանը, այս երեւույթ անգամ քաջալերվում է, որպեսզի փոքրերը եւս մասնակից դառնան եկեղեցական կյանքին:

Այդպիսի մի արարողության մասին է արձանագրել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պաշտոնական ամսագիր «Արարատ»-ը: Ըստ եկեղեցական պարբերականի՝ 1912 թ. սեպտեմբերի 30-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում կատարված մյուռոնօրհնության ժամանակ մատուցված Ս. Պատարագին մասնակցել են նաեւ Թ-իֆլիսից ժամանած կույսերը: «Որոշ հեւպաքրքրութիւն էին ներկայացնում ուխտաւորներից շատերի համար նաեւ Թ-իֆլիսից եկած 9 կոյսերի ներկայութիւնը բեմի վերայ, որոնք եկեղեցական շորերն հագած, ուրարները քցած սպասաւորում էին Պատարագի ամբողջ ընթացքում քշոց անելով մայրապետ Հռիփսիմէ Թ-այիրեանցի գլխաւորութեամբ. դրանցից Խոջամինասեան, Երմոնիա Բէրութչեան, Մարիամ Դօլմազեան, Կապարինէ Գուլոյեան կանգնած էին աջ կողմում, իսկ Խարազեան Շուշանիկ, Եփեմիա Վարդանեան, Հռիփսիմէ Ղոնեան եւ Գայեանէ Ալիխանեան՝ ձախ կողում»[34]:

Խոստովանենք, որ Մայր Աթոռի սրբազան իտրանին սարկավագուհիների ներկայությունը[35] փաստող այս պատկերը չափազանց հեւպաքրքրական է, թելադրված, թերեւս, մեծ ժողովրդականություն վայելող եկեղեցական մեծահանդես արարողությանը հեւպաքրքիր փայլ հաղորդելու մղումով:

Հայ Եկեղեցում մյուռոնօրհնության արարողությանը սարկավագուհիների մասնակցությունը այս օրինակով չի սահմանափակվում:

1936 թ. գարնանը Անթիլիասի Մայր տաճարում մյուռոնօրհնության արարողության ուշագրավ դրվագներից մեկը եւս հայ կրոնավորուհիների՝ այս անգամ Պոլսի Գալֆայան որբանոցի մայրապետների մասնակցությունն է սրբազան արարողությանը: Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության պաշտոնական «Հասկ» ամսագիրը մյուռոնօրհնության մասին պատմող հոդվածում նշում է որբանոցի մայրապետ, սարկավագուհի Աղավնի Քեռսայանի եւ դպրուհի Մարիամ Քեռսայանի մասնակցությունը սրբազան արարողությանը՝ «երկուքն ալ շապիկով եւ ուրարով»[36]: Պարբերականը շարունակում է. «Պատարագը սկսաւ, եւ երբ հասաւ Ողջոյնի պահը, թափօրը վերադարձաւ Սրբոց Թարգմանչաց եկեղեցին, բերելու համար Մեռոնի կաթսան, անուշահոտ իւղերը եւ Ս. Աջերու արկղը: Սարկաւագուհի Աղաւնի վերաբերում ըրաւ, իսկ Դպրուհի Մարիամ Աւետարան կարդաց»[37]:

«Հասկ»-ը նույն համարով առանձին անդրադարձ ունի նաեւ մայրապետների Անթիլիաս այցին. «...Կ. Պոլսէն, Հալէպի գծով, Անթիլիաս հասան Գալֆեան Որբանոցի

34 «Արարատ», 1912, հոկտեմբեր-նոյեմբեր, էջ 888:

35 Տարընթերցումից խուսափելով, որոշակի վերապահումով, Մայր Աթոռում Ս. Պատարագի արարողությանը սարկավագուհիների մասնակցության ուշագրավ դեպք կարելի է համարել նաեւ 1953 թ. հոկտեմբերի 25-ին՝ Գյուտ Խաչի տոնին, Մայր Տաճարում Թբիլիսիից ժամանած ուխտավոր երեք սարկավագուհիների մասնակցությունը Ս. Պատարագին: Այս մասին պաշտոնական «Էջմիածին» ամսագիրը գրում է. «Այդ օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածին ուխտի էին եկել Թբիլիսիի Ս. Գեորգ եկեղեցու հարգարժան երեք սարկավագուհի կույսեր, որոնք մասնակցում էին Սուրբ Պատարագի արարողություններին» («Էջմիածին», 1953, հոկտեմբեր, էջ 16):

36 «Հասկ», 1936, մարտ-ապրիլ, էջ 19:

37 Անդ:

մայրապետներ, Աղանի եւ Մարիամ, երկու հարազատ քոյրեր, իբրեւ ուխտաւոր ներկայ գտնուելու Մեռնօրհնէքի հանդէսին:

...Մայրապետ Աղանի ձեռնադրուած Սարկաւագ է, իսկ քոյրը՝ Մարիամ Դպիր: Երկուքն ալ Մեռնօրհնէքի հանդէսին սպասաւորեցին Ս. Սեղանի: Սարկաւագուհին Վերաբերում ըրաւ, Դպրուհին Աւետարան կարդաց»[38]:

Այս իրողությունները բացառիկ են հայ եկեղեցական կյանքում, ինչպես բացառիկ է 1930-ականներին սարկավագուհի Նունե Վերմիշյանի մասնակցությունը Թբիլիսիի Ջգրաշենի ծխական հայոց եկեղեցում մատուցված կիրակնօրյա պատարագներին, որ «անհուն գոհունակութիւն եւ բաւականութիւն» էր պատճառում անգամ այլադավանների եւ Ս. Պատարագի մասնակիցներին:

Այս մասին տեղեկանում ենք «Վավերագրեր հայ եկեղեցու պատմության» մատենաշարի՝ Արտակ եպս. Սմբատյանին նվիրված հատորում տեղ գտած մի քանի վավերագրերից:

1930 թ. մարտին, լինելով Վիրահայոց թեմի առաջնորդ, Արտակ սրբազանը՝ ընդառաջ Թբիլիսիի Ջգրաշեն Ավետյաց Ս. Աստվածածին հայոց եկեղեցու ծխական խորհրդի դիմումի, խնդրում է Ամենայն Հայոց Գեւորգ Ե. Սուրենյանց Կաթողիկոսին՝ երկարամյա ծառայության համար պարգեւատրել կույս Նունե Վերմիշյանին լանջախաչ կրելու իրավունքով[39]:

Նույն հատորում տպագրված է նաեւ Արտակ եպս. Սմբատյանին ուղղված ծխական խորհրդի հետեւյալ նամակը. «Տփխիսու Սուրբ Ստեփանոս եկեղեցու նախկին Կուսանաց անապատի միաբանուհի, հրեշտակակրօն համեստափայլ աւագ սարկաւագուհի կոյս Նունէ Արտեմեան Վերմիշեանը, որ յիշեալ անապատում ծառայել է ի մանկութենէ եւ այսօր էլ ծառայում է ամենայն սրբութեամբ, պարկեշտութեամբ, արիաջան անձնուիրութեամբ եւ արթնութեամբ եւ որպէս բարոյական վարձատրութիւն՝ աւագ սարկաւագութեան սրբազնագործ պաշտօնէութեան աստիճան է ընդունել 1914 թուին, սակայն՝ ժամանակի արգելառիթ հանգամանքների պատճառաւ ցայսօր չէ պարգեւատրուած լանջախաչով, որին արժանի է ըստ ամենայնի:

Յիշեալ շնորհունակ կոյս Նունէն, 4 տարի շարունակ, սրբազնագործ աւագ սարկաւագուհու պաշտօն է վարում մեր Սուրբ Աւետեաց-Ջգրաշէն եկեղեցումն ամէն կիրակի՝ Սուրբ Պատարագին, որով հոգեկան մեծ եռանդ է յուզում բարեպաշտ ծխականների եւ ժամառորների սիրտ ու հոգիների մէջ եւ միանգամայն անհուն գոհունակութիւն եւ բաւականութիւն պատճառում նոյն իսկ այլադաւան եկամուտ այցելողներին եւ Ս. Պատարագին ներկայացողներին:

Ուստի գնահատելով յիշեալ համեստափայլ կոյս Նունէ Արտեմեան Վերմիշեանի գովելի արժանիքը՝ եկեղեցական խորհուրդս խոնարհաբար դիմելով Ձերդ Գերապատիւ Սրբազնութեան՝ ամենախոնարհաբար խնդրում է, ով արժանաւոր հոգեւորականներին

38 «Հասկ», էջ 29:

39 Տե՛ս «Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության», գիրք Գ., Արտակ եպիսկոպոս Սմբատեանց (Տաուշեցի), Երեւան, 1997, էջ 497:

ոգեւորող եւ գնահատող գթառատ Սրբազան հայր, բարեհաճել տալ պարգեւատրել Սրբազնագործ կոյս Նունէին լանջախաչիւ, ի խրախոյս իւր բազմամեայ անբիծ եւ անձնուէր ամենաջերմեռանդ ծառայութեան»[40]:

Անշուշտ, ծիսական եկեղեցում Ս. Պատարագի արարողությանը սարկավագուհու մասնակցությունը անհնահատելի է, եւ, թերեւս, միակը Հայ Եկեղեցու պատմության ընթացքում, հավանաբար պայմանավորված ժամանակի հրամայականով՝ եկեղեցահալած տարիներին հոգեւորականների բացը լրացնելու նպատակով:

Ամփոփելով նշենք, որ Հայ Եկեղեցում սարկավագուհիներն ունեցել են իրենց որոշակի գործառույթները: Ժամանակի հոլովույթում նրանց ծառայությունների շրջանակը փոփոխվել ու ընդլայնվել է: Իսկ առանձին թեմերում, առնվազն ԺԹ. դարից սկսած՝ ընդհուպ մինչեւ Ի. դարը, թեմական առաջնորդների մասնավոր տնօրինությամբ նրանք մասնակցել են եկեղեցական արարողությունների: Սարկավագուհիներին արտոնվել է կուսանոցների սահմաններում, առանձին դեպքերում նաեւ կուսանոցներից դուրս, խորան բարձրանալ ու կատարել իրենց հոգեւոր ասպիճանին վերապահված պաշտոնը՝ անգամ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, ինչպես 1912-ի մյուռոնօրհնությանը, անկասկած՝ Ամենայն Հայոց Գեւորգ Ե. Կաթողիկոսի արտոնությամբ:

40 «Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության», գիրք Գ., էջ 497-498: